

N PS-0911-13
30.01.2011թ.

ՀՀ, ք Երևան, 0010,
Կառավարական տուն 3

ՀՀ կրթության և գիտության նախարար պրն. Արմեն Աշոտյանին

Կրկնօրինակը՝ Երևանի Օհանյան վարժարանի տնօրեն
սկն. Սուսաննա Օհանյանին

Հարգելի պրն. Աշոտյան

Ամեն տարի, Մայքրոսոֆթի “Գործընկերներ ուսման ոլորտում” ծրագրի շրջանակներում “Նորարար Դպրոցներ” ծրագրին և ռեֆորմների ինտենսիվ գործընթացին մասնակցելու համար ամբողջ աշխարհից ընտրվում են դպրոցներ: Դպրոցներն ընտրվում են իրենց ամբողջ ներուժով ստեղծելու ճկուն, փոխանցելի և վստահելի մոդելներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ և փոխանցել իրենց փորձն ու ստեղծված մոդելները այլ դպրոցների՝ թե իրենց երկրներում, թե տարածաշրջանում և թե ամբողջ աշխարհում:

Այս տարի ծրագրին դիմել էին ավելի քան 200 դպրոցներ տարբեր երկրներից: Ուրախ ենք տեղեկացնել, որ բարդ ընտրության և բարձր մրցակցության արդյուքում Երևանի Օհանյան վարժարանը միջազգային հեղինակավոր ժյուրիի կողմից ընտրվեց 63 ամենաառաջավոր դպրոցների շարքում, որոնք կմասնակցեն “Նորարար դպրոցներ” ծրագրին ողջ տարվա ընթացքում:

Հարկ է նշել, որ ընտրված 63 դպրոցների մեջ են ներառված դպրոցներ ԱՄՆ-ից, Մինգապուրից, Ավստրալիայից, Ավստրիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Իսրայելից, Շոտլանդիայից, Նորվեգիայից, Լատվիայից, Գերմանիայից, Հարավաֆրիկյան հանրապետությունից և այլ երկրներից:

Հայաստանն այս մրցույթին մասնակցում է երրորդ անգամ: Նախորդ տարի Նորարար դպրոցներ ծրագրի մասնակից էր ընտրվել Անանիա Շիրակացի Ճեմարանը իսկ 2009-ին՝ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրը:

Դպրոցների ընտրությունից հետո Մայքրոսոֆթ ընկերության նախաձեռնությամբ նոյեմբերի 06-11-ը Ամերիակայի Միացյալ Նահանգների Վաշինգտոն նահագում տեղի կունենա Մայքրոսոֆթի համաշխարհային նորարարական կրթության ամենամյա ֆորումը, որին մասնակցության հրավեր են ստացել Օհանյան վարժարանի տնօրեն՝ Սուսաննա Օհանյանը և ուսուցչուհի Աննա Գալստյանը, ովքեր ֆորումի ընթացքում կներկայացնեն Հայաստանը, դպրոցը կրթական ցուցահանդեսի ընթացքում, կմասնակցեն 63 դպրոցների ներկայացուցիչների համար կազմակերպված հատուկ սեմինարներին, թիմային աշխատանքներին, կստեղծեն համագործակցային կապեր այլ երկրների ներկայացուցիչների հետ:

Հայարտությամբ շնորհավորում ենք Կրթության և գիտության նախարարությանը և Երևանի Օհանյան վարժարանին միջազգային հաջողության համար և ծրագրի ողջ ընթացքում պատրաստակամ ենք աջակցելու ցանկացած հարցում, Հայաստանը միջազգային հանրությանը ներկայացնելու գործում:

Հարգանքով՝



Գրիգոր Բարսեղյան
Մայքրոսոֆթի հայաստանյան
ներկայացուցչության տնօրեն